

*Лилит Брутян, Говорим, не говоря (Невербальная коммуникация в разных культурах), Ереван, Изд-во ЕГУ, 2015, 76 с.:*

Լ. Գ. Բրուտյանի սույն ուսումնական ձեռնարկը հասցեագրված է «Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն» մասնագիտությամբ սովորող ուսանողներին, ինչպես նաև ոչ բառային հաղորդակցության խնդիրներով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակին:

Աշխատանքը գրված է ռուսերեն լեզվով, գիտական ամուր հիմքեր ունեցող քննությամբ և սեղմ շարադրանքով:

Հեղինակը հետաքրքիր ոճով դիտարկում է ոչ բառային հաղորդակցության տարաբնույթ կողմերը, հաղորդակցության ոչ բառային բաղադրիչները շփման ընթացքում (Գլուխ I), հաղորդակցության ոչ բառային միջոցների տեսակները (Գլուխ II), և այդ ամենը լուսաբանվում է տարբեր մշակույթներից բերված հետաքրքիր օրինակներով: Ձեռնարկի վերջում բերվում են Ա. Բիտովի «Уроки Армении» հայտնի գրքից հատվածներ, ուր ռուս գրողի աչքերով դիտարկվում են հայկական լեզվամշակույթին հատուկ ոչ բառային հաղորդակցության տարբեր միջոցներ:

Ձեռնարկում արդարացիորեն

նշվում է, որ մինչև XX դարի կեսերը ընդունված էր այն կարծիքը, թե տեղեկատվության գերիշխող մասը հաղորդվում է հենց խոսքի միջոցով, այսինքն՝ բառային հաղորդակցման միջոցով: Սակայն, ինչպես ցույց են տալիս մասնագիտական հետազոտությունները, մենք տարաբնույթ տեղեկատվություն ենք հաղորդում ոչ միայն խոսելիս, այլև ոչ բառային միջոցների օգնությամբ, երբեմն էլ առանց բառային ուղեկցության: Բազմաթիվ հետազոտություններ ցույց են տալիս, որ ոչ բառային նշանները հինգ անգամ ավելի ուժգին ազդեցություն ունեն, քան բառային նշանները:

Դիտարկելով ոչ միայն բառային հաղորդակցման տեսակները՝ կինեսիկան, տակսեսիկան, սենսորիկան և այլն, հեղինակը բազմաթիվ օրինակների հիման վրա ցույց է տալիս, որ բառային հաղորդակցման միջոցները և դրանց բաղկացուցիչ տարրերը կարող են տարբեր ծագում ունենալ. ինչպես կենսաբանական, որը բնորոշ է շատ կենդանի արարածներին, այնպես էլ մշակութային՝ պայմանավորված այն միջավայրի տարբեր ավանդույթներով, որտեղ մարդը դաստիարակվում և ապրում է: Ոչ բառային լեզվին տիրապետելը ենթադրում է ոչ միայն դրա՝ որպես համապատասխան նշանային համակարգի միասնության իմացու-

թյան, այլ նաև այդ համակարգի տարրերից յուրաքանչյուրի լեզվական արտահայտման իմացություն:

Գրքում մանրամասնորեն վերլուծվում են այն ոչ բառային նշանները, որոնք հանդիսանում են հաղորդակից կողմերի բնութագրի միջոց և մարդու մասին բազմապիսի տեղեկատվություն են հայտնում նրա ազգային պատկանելության, սոցիալական վիճակի, խառնվածքի, առողջական վիճակի մասին և այլն: Զրուցակցի վարքագծի տարրերի «ընթերցումը» նպաստում է ավելի բարձր աստիճանի փոխըմբռնմանը հասնելուն: Նման տեղեկատվական աղբյուրների հանդեպ զգայուն վերաբերմունքը ցանկացած հաղորդակցային ակտի ընթացքում անհրաժեշտություն է արդյունավետ հաղորդակցման համար:

Բավականին հետաքրքրությամբ ընթերցվող, ինչպես նաև իմացական լավագույն մտորումների տեղիք տվող այս գրքում հեղինակը, վերլուծելով միջմշակութային հաղորդակցման զանազան իրավիճակներ և հենվելով հեղինակավոր աղբյուրների վրա, նշում է, որ ոչ բառային հաղորդակցման գործում մշակութային տարբերությունները չի կարելի անտեսել, քանի որ լեզվին ազատ տիրապետելու դեպքում անգամ դրանք հանգեցնում են մշակութային բախումների և շփման մեջ պատնեշների:

Բ. գ. դ. պրոֆ. Լ. Գ. Բրուսյանի սույն (հերթական) ուսումնական ձեռնարկը, ինչ խոսք, միանգամայն արդիական է, հույժ կարևոր և

օգտակար ոչ միայն ուսանողների, այլև լայն հետաքրքրվողների համար:

[Ա. Ս. Գալստյան, Գ. Կ. Հովսեփյան, Ա. Գ. Սահակյան, Լ. Ե. Սահինյան], Նոր բառեր, Ա պրակ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 196 էջ:

Գիրքը հեղինակային համատեղ (կոլեկտիվ) աշխատանք է, որի հեղինակների անունները բերվում են միայն վերջում (լավ չէ. մենք վերը նշում ենք փակագծում): Շատ կարևոր և օգտակար աշխատանք է ժամանակակից հայերենի բառապաշարի նորակազմությունների ամբողջացման առումով:

Գիրքը ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բառարանագրության և բառագիտության բաժնի աշխատակիցների (բաժնի վարիչ՝ Ա. Գալստյան), կարելի է ասել, երախայրիքն է, որ միանգամայն գնահատելի է: Սա առաջին պրակն է, որպիսով հեղինակները բառարանի առաջաբանում նշում են, որ «հրատարակումը լինելու է շարունակական» (էջ 5):

Եթե գործնական սահմանում տալու լինենք գրքում նոր բառ համարված միավորներին, ապա ստացվելու է, որ այդպիսին են հրապարակի վրա հայտնի յոթ բառարանում «չարձանագրված» լինելու հանգամանքով: Այդ յոթը նշվում է գրքի առաջաբանում. դրանք նոր գրական հայերենի ամենածավալուն բառարաններն են: Եվ ըստ հեղինակների գործ-

նական մոտեցման, եթե ներկայիս մամուլում և այլ կարգի գրավոր աղբյուրներում այս կամ այն բառը թվում է, որ նոր է, և այն ստուգվում է հիշյալ բառարաններով (այսինքն՝ բացակայում է նրանցում), ապա այն կարելի է թեկուզ այդ պայմանով, տվյալ դեպքում համարել նոր:

Ինչպես առաջաբանում է նըշվում, այս պրակն ընդգրկում է «ավելի քան 1500 բառամիավոր»:

Աշխատանքն ունի մի շարք արժեքավոր կողմեր: Հարկ ենք համարում նշել դրանցից միայն մի քանիսը:

Բառարանն իր բնույթով բացատրական է, որ ներկայանում է նույնպիսի բառարաններին առհասարակ բնորոշ հետևյալ 5 բաժիններով. 1) գլխագրերով բերվում է գլխաբառը, 2) գլխաբառին հաջորդում են քերականական նշումը (գ. = գոյական, ած. = ածական, բ. = բայ. մկբ. = մակբայ և այլն), բառի գործառական-ոճական կողմը (եթե այն անհրաժեշտ է տվյալ բառի գործառության ոլորտը լրացուցիչ պարզաբանելու համար. *բնատ.* = բանաստեղծական, *գրկն.* = գրականագիտական, *երաժշտ.* = երաժշտական, *իրավ.* = իրավաբանական, *կենս.* = կենսաբանական, *մաթ.* = մաթեմատիկա, *քղբ.* = քաղական և այլն). 3) տրվում է բառի բացատրությունը (որը բավականին սեղմ է), 4) բերվում է բնագրային այս կամ այն վկայությունը օրինակը (քաղված գրավոր աղբյուրներից. օրինակ-հատվածի երկար լինելու դեպքում այն կրճատվում է կախման կետերով) և 5) հղում է կա-

տարվում բերված բնագրին (այն, թե ինչ աղբյուրից է քաղված տվյալ նորաբանություն-բառ պարունակող հատվածը):

Ավելորդ չենք համարում բերել միայն մեկ օրինակ-նմուշ. ԱՆՏԱՌԱՃՈՒՄ, գ. *Անտառի ծառերի աճը*: ...Ներկայիս «Խոսքովի անտառ» արգելոցի տարածքում *անտառաճման* խիստ անբարենպաստ պայմաններում հիմնվել է անտառ, և ծառ կտրողը թագավորի հրամանով խստագույնս պատժվել է (ՀՀ, 19.06. 2014): (Տե՛ս «Նոր բառեր», էջ 15):

Բառահոդվածների նման կառուցվածքը գնահատելի է նաև նրանով, որ պահպանված է բառի ներկայացման միօրինակությունը, բառարանային մշակման հստակությունը և այլն: Նկատելի է, որ հեղինակներն հետևողական են իրենց իսկ ընդունած սկզբունքների հարցում:

Սեղմ առաջաբանից հետո բառարանի սկզբում դրված են քերականական, գործառական նշումների համառոտագրություններ, օգտագործված աղբյուրների, ընդ որում նախ՝ գրքերի, այնուհետև՝ ամսագրերի և լրագրերի ցանկեր:

Մենք փորձեցինք բերվող նոր բառերը համեմատել իրենց իսկ նշած բառարանների տվյալների հետ, սակայն այդպես էլ որևէ վրիպում կամ անճշտություն չգտանք, ուրեմն հարաբերականորեն նոր լինելը արդարացված է:

Մի քանի նկատառում, թեկուզ հետագա պրակները կազմելիս նկատի ունենալու համար:

Օգտագործված աղբյուրները (գրքեր, ամսագրեր, լրագրեր, հեռուստատեսային հաղորդումներ և այլն), այնուամենայնիվ, ավելին չեն (շուրջ 5 տասնյակ), քանի որ կարելի էր ավելին ընդգրկել, թեև եղածն էլ որոշակի պատկերացում է տալիս ժամանակակից պայմաններում բառապաշարի համալրման և կատարելացման տեմպերի վերաբերյալ: Ավելացնենք, որ կան նաև այլ բառարաններ (հեղինակային և այլն), բառգրույկներ, տարբեր կարգի ուսումնասիրություններին կից (հավելվածային) ցանկեր, որոնց թերևս հետազայում կարելի է անդրադառնալ թեկուզ հայերենի նոր բառապաշարի ամբողջացման նպատակով:

Գլխաբառերի բացատրության մասը, թերևս, կարելի է ավելի մանրամասն (կամ ընդարձակ) ներկայացնել, որովհետև երբեմն ունենում ենք այն տպավորությունը, որ բառի բաղադրիչներն են առանձնացվում. հմմտ. ՀՈԳՍԱՑԱՎ, ած. *Հոգսն ու ցավը* (էջ 124), ՀՈՂԱՓՈԽՈՒՄ, գ. *Հողը փոխելը* (նույն տեղում), ՎԵՐԱԱՄՐԱԳՐԵԼ, բ. *Կրկին ամրագրել* (էջ 171) և այլն:

Նման կարևորության բառարանի տպաքանակը ավելին պիտի լիներ (լույս է տեսել ընդամենը 150 օրինակ):

Վերջում շեշտենք, որ հեղինակների բառագիտական-բառարանագրական հմտությունը հույս է ներշնչում, որ առաջիկա տարիներին կունենանք բառարանի հերթական պրակը, նույնիսկ պրակները:

«Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողով. 7-9 հոկտեմբերի, 2015 թ. (Ջեկուցումների ժողովածու)», Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 390 էջ:

2015 թ. հոկտեմբերի 7-9-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողովը: Գիտաժողովի բացմանը ներկա էին ՀՀ սփյուռքի փոխնախարար Ս.Սրապիոնյանը, ՀՀ լեզվի պետական տեսչության պետ Ս.Երիցյանը, ՀՀ Ազգային ժողովի, ԳԱԱ և բուհերի ներկայացուցիչներ, այլ հյուրեր:

Գիտաժողովին մասնակցում էին հայագետներ Հայաստանից և Արցախից, Ֆրանսիայից, Ռուսաստանի Դաշնությունից և ԱՄՆ-ից: Ենթադրյալ գիտաժողովում կարդացվեցին հինգ տասնյակ զեկուցումներ՝ նվիրված հայոց լեզվի ուսումնասիրության գրեթե բոլոր ոլորտներին:

Բացելով լիազումար նիստը՝ ինստիտուտի տնօրեն Վ.Կատվալյանը կարևորեց գիտաժողովների դերը գիտության զարգացման, գիտական ձեռքբերումների հանրայնացման առումներով: Գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին և գիտական նոր հաջողություններ մաղթեցին ՀՀ ԳԱԱ ակադ. Վ. Բարխուդարյանը, այլև Ս.Սրապիոնյանը և Ս.Երիցյանը:

Լիազումար նիստում զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ թղթ. անդամներ Լ. Հովհաննիսյանը («Լեզուների մասին Եղիշեի մի

վկայության շուրջ») և Ա. Դուլուխանյանը («Հայերենի ամբիոնը Փարիզի արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցում»), Բ. Գ. Դ. Վ. Գ. Համբարձումյանը («Հայերենի և կելտական լեզուների բառային զուգաբանությունների հարցը»), Բ. Գ. Թ. Ն. Պողոսյանը («Աշխարհաբարի ձևավորման հարցում հայկական գաղթավայրերի ունեցած դերը»), Բ. Գ. Թ. Տ. Դալալյանը («Հայերենի ենթաշերտային ծագման որոշ բառերի ստուգաբանություններ») (Ֆրանսիա):

Կարդացվեցին զեկուցումներ հայոց լեզվի պատմության, հայ բարբառագիտության, հայ քերականագիտական մտքի պատմության, հայերենի ստուգաբանության, ժամանակակից հայերենի բառապաշարի և քերականական կառուցվածքի տարբեր հարցերի վերաբերյալ:

Հայոց լեզվի պատմությանը վերաբերող զեկուցումներով հանդես եկան Հ. Թադևոսյանը («Միջին քաղաքիչով նոր կազմություններ միջնադարյան բժշկարաններում»), Լ. Խաչատրյանը («Մակբայի արժեքով պատկերավոր համեմատությունները գրաբարում»), Վ. Խաչատրյանը («Միջին հայերենում փոխառված բառերի գործածությունը ձեռագրերի 15-րդ դարի հիշատակարաններում»), Գ. Մխիթարյանը («Մանրուսման եղանակների անվանումները»), Գ. Մուրադյանը («Գրիգոր Մագիստրոսի լեզուն»), Ա. Սանթրոյանը և Լ. Պետրոսյանը

(«Ժխտական միավորների կապակցելիությունը գրաբարում»):

Հայերենի ստուգաբանությանը և բառարանագրությանը վերաբերող զեկուցումներով հանդես եկան Ն. Սիմոնյանը («Գրաբարի «միտք, մտածողություն» իմաստային խմբի բայերը»), Ն. Հովհաննիսյանը («Նորակազմ բառեր XVIII դարից ավանդված հոմանիշների ձեռագիր բառարաններում»), Լ. Մարգարյանը («Հնդեվրոպական արմատները Արցախի տեղանվանական համակարգում»), Ս. Պապիկյանը («Միհր-Մհեր-Վատմիհր բառերի մասին»):

Հայ բարբառագիտությանը վերաբերող զեկուցումներ կարդացին Ջ. Բառնասյանը («Ածանցումը հայերենի բարբառներում. նախաձանցում»), Վ. Կատվալյանը («Բայագետի բարբառում բառասկզբի բաղաձայնական հաջորդականությունների մասին»), Հ. Խաչատրյանը («Տանիք հասկացության բառանվանումների գործառական-ծագումնաբանական քննությունը բարբառային հայերենում»), Ա. Սարգսյանը («Հատուկ անուններով կազմված հատուկ անունները Ղաբաբաղի բարբառում»):

Հայ քերականագիտական մտքի պատմությանը վերաբերող զեկուցումներով հանդես եկան Դ. Գյուլգասյանը («Քերականական կարգերի համատեղումը ստորոգման մեջ»), Տ. Սիրունյանը («Վաղ լատինաբանություններ Քոնայի կենտրոնի քերականական երկերում (XIV դ.)»):

Ժամանակակից հայերենի բառապաշարի և տերմինաբանության հարցերը մշտապես եղել են ուսումնասիրողների ուշադրության առարկան: Գիտաժողովում անդրադարձ եղավ նաև հայերենի տեքստի վերլուծությանը և բառապաշարի իմաստաբանությանը: Նման թեմատիկայով զեկուցումներով հանդես եկան Ա. Աբաջյանը («Տեղաշարժեր արևելահայերենի սոսկածանցավոր բայերի համակարգում»), Ա. Բարսեղյանը («Նախադասությունների կապակցման բառական միջոցները տեքստում»), Ս. Ս. Գրիգորյանը («Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի երաժշտական հասկացությունների իմաստային քննություն»), Ն. Խաչատրյանը («Բազմագործառական շաղկապները ժամանակակից հայերենում»), Ծ. Մինասյանը («Տարածք երկրորդական նախադասությունները ժամանակակից հայերենում»), Ա. Սարգսյանը («Գրական արևմտահայերենում հին հայերենի /h/ երկբարբառի արտացոլման հարցի շուրջ»), Մ. Միրումյանը («Հավելական բաղադրիչով հարադրական բայերի կառուցատիպերը Հ. Թումանյանի հեքիաթներում»), Յ. Չոլաքեանը («Արեւմտահայերենի բաղաձայնական համակարգի արդի վիճակը»), Հ. Սուքիասյանը («Բժշկագիտական տերմինների կանոնարկումը հայերենում»):

Ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքին, ոճերին վերաբերող զեկուցումներով հանդես եկան Ռ. Դոխոյանը

(«Մտածական բայերի դասակարգումը արդի հայերենում»), Հ. Զաքարյանը («Բառապաշարի համալրման սկզբունքները արդի հայերենում»), Հ. Ղազարյանը («Որոշյալ հոդերի իմաստագործառական առանձնահատկությունները»), Ն. Սարգսյանը («Գործառական ոճերը և խոսակցական լեզուն»), Ռ. Թոխմախյանը և Ս. Տիոյանը («Հոլով և հոլովական իմաստ»):

Զուգադրական լեզվաբանությանը վերաբերող թեմայով ելույթ ունեցավ Լ. Բրուտյանը («Հաճոյախոսությունները հայկական լեզվամշակույթում»), որը թերևս միակն էր այդ թեմատիկայով:

Գիտաժողովում եղան նաև զեկուցումներ, որոնք ընդգրկվեցին հետազայում լույս տեսած գրքի «Հաղորդումներ» բաժնում (Ս. Գրիգորյան և Ն. Պարոնյան, «Հովհան Մանդակունու ճառերի բառակազմությունը», Գ. Մկրտչյան, «Մեծ եղեռնը հայերենի մի շարք բարբառների վերացման ու տարածական հիմքերի խախտման պատճառ», Ա. Մուրադյան, «Գրաբարի և միջին հայերենի նախդրավոր և նախադրությամբ կառույցներով գոյականական բառակապակցությունների զուգադրական բնութագիրը», Հ. Պետրոսյան, «Բարբառային շերտի բառերի արտացոլումը գիտատեխնիկական տերմինաբանության մեջ»):

Գիտաժողովը եզրափակվեց զեկուցումների վերաբերյալ հետաքրքիր քննարկումների մթնոլորտում, եղան ուշագրավ դիտարկումներ, հայտնվեցին նկատա-

ոումներ, որոնք, ինչպես որ գեկուցումներն ամբողջությամբ, կարևոր են հայերենագիտության զարգացման համար:

«Երիտասարդ լեզվաբանների հանրապետական V գիտաժողովի գեկուցումներ», Երևան, 2015 թ., սեպտեմբեր 18), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 120 էջ:

Սեպտեմբերի 18-ին ԳԱԱ լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ Երիտասարդ լեզվաբանների հանրապետական 5-րդ գիտաժողովը: Բացելով գիտաժողովը և ողջունելով մասնակիցներին՝ լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանը կարևորեց երիտասարդ մասնագետների ներգրավվածությունը գիտական կյանքում, նրանց մասնակցությամբ քննարկումների ծավալումը, որը թույլ կտա հնչեցնել ու ճշգրտել վիճելի հարցեր, անել եզրահանգումներ: Նա հույս հայտնեց, որ գիտաժողովում կներկայացվեն հետաքրքիր գեկուցումներ, նոր ու թարմ մտքեր, հայ լեզվաբանական մտքի զարգացման հեռանկարներին միտված առաջարկություններ:

Ջեկուցումներով հանդես եկած երիտասարդ գիտաշխատողները (գիտության թեկնածուներ, ասպիրանտներ, հայցորդներ և այլն), որոնք ներկայացնում էին երևանյան և մարզային գիտակրթական տարբեր հաստատություններ (ԳԱԱ լեզվի ինստիտուտ, ԵՊՀ, ՀՊՄՀ, Մատենադարան և այլն):

Ջեկուցումների թեմատիկան ընդգրկուն էր, անդրադարձ եղավ հայերենի զարգացման տարբեր փուլերին, ներկայացվեցին լեզվի բառային, քերականական և ոճական զանազան դրսևորումների ու առանձնահատկությունների վերաբերյալ դիտարկումներ: Դրանք հիմնականում վերաբերում էին լեզվաբանության մի քանի բնագավառի:

Հայոց լեզվի պատմությանը նվիրված գեկուցումով հանդես եկան Ռ. Սահակյանը («Եսայի Հասան-Ջալալյանցի նամակների լեզվական էական առանձնահատկությունները»), Վ. Բաղմանյանը («Հայոց տոհմանունների իմաստաբանական դաշտը ըստ Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» գրքի»), Տ. Մանուկյանը («Նորահայտ շարահյուսական տերմիններ ԺԷ դարի ձեռագրերում»): Համեմատաբար քիչ են այլ բնագավառների վերաբերող գեկուցումները: Այսպես, հայ քերականագիտական մտքի պատմությանը վերաբերող գեկուցումով հանդես եկավ Ք. Հարությունյանը («Գրաբարի դարձվածների և ոճերի քննությունը հայ լեզվաբանության մեջ»), Ժամանակակից հայերենին առնչվող թեմայով գեկուցում կարդաց Լ. Սարգսյանը («Բառակազմական –ւ/ածանցը Ժամանակակից հայերենում»):

Ընդհանուր լեզվաբանական հարցեր շոշափեց Մ. Սարգսյանը («Ընդհանուր լեզվաբանական որոշ հարցերի աստիճանական դասա-

կարգումը Գ. Ջահուկյանի աշխատություններում»):

Համեմատաբար շատ էին գուգադրական լեզվաբանությանը վերաբերող թեմայով զեկուցումները, ելույթ ունեցան Ս. Կարապետյանը («Գոյականական բաղադրիչներով շաղկապական հարադրությունները հայերենում և անգլերենում»), Ե. Հայրիկյանը («Միջնորդավորված թարգմանության հարցը Մարկեսի երկերում»), Լ. Մուրադյանը («Հայերենի, ռուսերենի, անգլերենի ան-

կանոն բայերի կադապարային-գուգադրական քննություն»), Ա. Ավագյանը («Համանուն և հարանուն բառերի ըմբռնման և կիրառական արժեքի հարցի շուրջ»), որոնք փաստորեն այսպես թե այնպես թողնում են նոր ուսումնասիրության փորձի տպավորություն:

Գիտաժողովում կարդացված զեկուցումները հողվածների և հաղորդումների տեսքով, լույս են տեսել վերը բերված վերտառությամբ: